ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

'ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ' ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Անցկացման վայրը՝ ք. Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Գոհար Խաչատրյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք գյուղի միջնակարգ դպրոց

Վարդենիս 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գրական ակնարկ
3. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ռուսաց լեզու առարկայի դասավանդման ընթացքում
4. Փորձարարական հետազոտություն
   4.1 Խմբի նկարագիրը
   3.2 Փորձարարական դաս 1
   4.2 Փորձարարական դաս 2
5. Վերլուծություն
6. Գրականություն
7. Հավելված

Ներածություն

[1]Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

[2]Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Այս թեման այն թեմաներից է, որ մշտապես արդիական է և ենթակա քննարկման ու բարեփոխման: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում արժեքային համակարգը Ռուսաց լեզվի դասերին:

[1] («Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999)

[2] Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

2.Գրական ակնարկ

Ըստ Վ.Ս.Լեդնևի' ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը, հետևաբար ուսումնական առարկաների հուզական արժեքային բաղադրատարրի բովանդակությունը տարբեր է' ըստ դրանց դերի և գործառույթների: Այս տեսանկյունից հետազոտողների կողմից առաջարկվել են ուսումնական առարկաների դասակարգումներ' ըստ դրանց գործառույթների:Մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաներում, ըստ Վ.Ս.Լեդնևի, առանձնացվում են հաղորդակցման գեղագիտական կողմերը' ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա:Չնայած դասակարգման բազմաթիվ մոտեցումներին' հետազոտողները միասնական են այն հարցում,որ լեզուների բնագավառի առարկաներն իրականացնում են տարբեր գործառույթներ:Այսինքն' այդ առարկաներից յուրաքանչյուրը անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից ունի իր առանձնահատկությունները:

[3] «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային

գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

3. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ռուսաց լեզու առարկայի դասավանդման ընթացքում :

Ռուսաց լեզվի դասընթացների միջոցով սովորողի վերաբերմունքի, արժեքների, դիրքորոշման ձևավորումն ու զարգացումը, ըստ դպրոցի աստիճանների, ուղղակի հիմնված է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակություններին միտված ակնկալվող վերջնարդյունքների վրա:

Ծրագրային նյութն ընտրված է այնպես, որ նպաստի սովորողների հետաքրքրությունների խթանմանը, ձևավորի այս կամ այն երևույթի վերաբերյալ սեփական կարծիքն արտահայտելու և հիմնավորելու մշակույթ: Բացի այդ, դասընթացների բովանդակությունը միտված է օգնել սովորողներին կարևորել հանդուրժողականությունը, հարգանքը, մեդիագրագիտությունը, կոնֆլիկտների խաղաղ լուծումը, մարդու իրավունքը, հավասար հնարավորությունները և այլն:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել

միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամրելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության ևընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր

պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» : Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և

այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Մասնագիտական գրականության

վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

---

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
8. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացնելու եմ Գեղարքունիքի մարզի Արփունքի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում: Արփունք գյուղը սահմանամերձ գոտում է գտնվում և շատ կարևոր եմ համարում երեխաների մոտ հայրենասիրության ոգու բարձրացումը քանի որ **Հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը՝ սրբազան զգացում,** եթե սիրում ես հայրենիքդ, նշանակում է՝ սիրում ես ընտանիքդ ու գերդաստանդ և նրանց ապահովության, գեղեցիկ ու շեն ապագայի համար կյանքի գնով պաշտպանում ես երկիրդ, պահպանում ես քո ազգային նկարագիրը:

Այս դասարանում սովորում են 8 աշակերտ՝ 4 աղջիկ և 4 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Ռուսաց լեզուն անցնում են շաբաթական 3 ժամ: Այս դասարանում և առհասարակ դպրոցում սովորողները ռուսաց լեզվի ծրագրի շրջանակներում ծանոթանում են սեփական և օտար ազգի ինքնության, ընտանիքի, համայնքի և պետության արժևորմանը, ազգային և

համաշխարհային հոգևոր և նյութական ժառանգության և մշակութային բազմազանության արժևորմանը ինչպես նաև մարդու կյանքի, արժանապատվության և իրավունքների արժևորմանը, ժողովրդավարության, սոցիալական արդարության, և օրենքի գերակայության արժևորմանը, համաշխարհային մշակույթում ազգային մշակույթի ներդրումը արժևորելը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

3.2.Փորձարարական դաս 1

Դասի թեման ՝ 《Մեր հայրենիքը Հայաստանն է》

Հիմնական հասկացություններ՝ Հայրենիք, հայրենասեր, հայրենասիրություն, նոստալգիա(կարոտ):

Դասի ընթացքը կազմակերպչական՝ Ստուգվում է աշակերտների պատրաստվածությունը դասին:

Մոտիվացիա (ինքնորոշում) ուսումնական գործունեության համար:

Առաջադրանքի ստուգում հարց պատասխան մեթոդով

Աշակերտներին տրվում են քարտեր՝ տերմինի սահմանում տալու առաջադրանքով

Հանրապետություն -...

Սահմանադրություն - ...

Պաշտոնական լեզու - ...

Քարտերը լրացնելուց և հավաքելուց հետո ուսուցիչը հիշեցնում է աշակերտմերին, որ ՀՀ_ ը անկախ պետություն է, կազմված մարզերից

Սահմանադրությունը երկրի հիմնարար օրենքն է, պետական լեզուն սովորելու պարտադիր լեզու է , որով կազմվում են պաշտոնական փաստաթղթեր:

Հարցաադրումներ

Ի՞նչ է Հայրենիքը:
Ինչո՞ւ ենք մենք սիրում Հայրենիքը:

Ի՞նչ է հայրենասիրությունը,
Ո՞ւմ կարելի է հայրենասեր համարել:

Հիմնական փուլ. Ուսումնական նյութի ակտիվ գիտակցված յուրացում Ի՞նչ է Հայրենիքը:
Ուսուցիչը աշակերտներին տալիս է «Ի՞նչ է հայրենիքը» հարցը և առաջարկում ինքնուրույն պատասխանել դրան:
Աշակերտները պատասխանում են հարցին: Աշակերտների պատասխանները լսելուց հետո ուսուցիչը ամփոփում է `Հայրենիքը այն վայրն է, որտեղ մարդ ծնվել է, որտեղ ապրել են նրա նախնիները:

Ինչո՞ւ ենք մենք սիրում մեր երկիրը: Ի՞նչ է հայրենասիրությունը:
Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է մայրիկի հետ Հայրենիքի նմանության վրա և առաջարկում է պատասխանել այն հարցերին, թե ինչու ենք մենք սիրում մայրիկին: Երբևէ վիրավորվե՞լ եք և բարկացե՞լ եք ձեր մոր վրա: Ուսանողները պատասխանում են հարցերին, ուսուցիչը շարունակում է հայրենիքի և մոր զուգահեռը: Մարդկանց ճնշող մեծամասնությունը սիրում է իր հայրենիքը, չնայած նրա թերություններին, պատրաստ է պաշտպանել այն վտանգի դեպքում: Սա անհրաժեշտ է ժողովրդի կյանքի շարունակության համար:
Դասի ամփոփում
Ուսանողներին առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին.
-Ինչպե՞ս բարելավել կյանքը մեր գյուղում:
- Վերոնշյալներից ո՞րը կարող ենք ինքներս անել:

-Մեր գործողությունները կարելի՞ է անվանել հայրենասիրություն:
-Ապացուցիր քո տեսակետը

Դասի եզրափակիչ փուլը: Ուսուցիչը աշակերտներին տանում է դեպի հայրենիքը սիրելու և նրա բարօրության համար աշխատելու անհրաժեշտության համոզմունքին:

Տնային աշխատանք

1.Գրել ասացվածքներ Հայրենիքի մասին:

2.Պատասխանել հարցին «Ի՞նչ է հայրենասիրությունը»:

3.3.Փորձարարական դաս 2

Թեմա՝ Հայրենասիրություն

Պատրաստությունը դասաժամին՝ Գրել հարցեր քննարկման համար, անցկացնել հարցում դպրոցում ավագ դպրոցի աշակերտների շրջանում, վերցնել մեջբերումներ թեմայի վերաբերյալ, պատրաստել պաստառներ:

1.Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և Հայրենիք: Նա, ով ընդունում է Աստծու գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ Ազգ, Հայրենիք, Պետություն:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

2.Հայրենասիրությունը հիմնականում այն համոզմունքն է, որ տվյալ երկիրը լավագույնն է աշխարհում, քանի որ դու ծնվել ես դրանում: Դուք երբեք չեք ապրի խաղաղ աշխարհում, քանի դեռ չեք ջարդել հայրենասիրությունը մարդկային ցեղի միջից:

Բեռնարդ Շոու

3.Հայրենիք - այն երկիրը, որտեղ մարդը ծնվել է և որի քաղաքացին է: Հայրենասիրությունը սեր է, նվիրվածություն և սեր հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ:

Դ.Ն.Ուշակով

Խնդրահարույց հարց:

Վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ ենք լսում «Հայրենիք», «սխրանք», «ծառայություն» բառերը...

Հենց Նիկոլայ Կոգանի այս խոսքերով ես կցանկանայի սկսել մեր զրույցը՝ «Ի՞նչ է նշանակում լինել հայրենասեր այսօր»: (Աշակերտները բաժանվում են խմբերի, և դասի ընթացքում թղթի վրա գրում են իրենց առաջարկները, դասի վերջում յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի հայրենասիրության սահմանումը):

Իսկ դուք՝ այսօրվա դպրոցականներդ, ինչպե՞ս եք հասկանում, թե ինչ է հայրենասիրությունը: Ձեզանից յուրաքանչյուրը ինչպե՞ս է տեսնում Հայրենիքին մատուցած ձեր հայրենանվեր ծառայությունը: Պատրա՞ստ եք այսօր ցանկացած զոհաբերության և գործի հանուն ձեր հայրենիքի շահերի: Որոնք են Հայրենասիրության ակունքները, հայրենասերն այսօր:

Իմ խոսքը Հայրենասերներ չեն ծնվում, հայրենասեր դառնում են: Եվ ինչքան էլ որևէ մեկը խոսի հայրենասիրության մասին, այս ամենը խոսքեր են: Ճշմարտությունը հոգու մեջ է: Ինչպես ասել է Գարեգին Նժդեհը _Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և Հայրենիք:

Նա, ով ընդունում է Աստծու գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ Ազգ, Հայրենիք, Պետություն:

Հավատում եմ, որ դուք այսօր անկեղծ էիք և ձեզ զգում եք որպես հայրենիքի հայրենասեր:

Վերլուծություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է արժեքային համակարգի ձևավորման մասին Ռուսաց լեզվի դասընթացի ժամանակ : Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները որոնց թվում,

այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Ռուսաց լեզու առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը այլ ազգերի համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի, իր և այլ ազգի մի շարք սովորույթներ և դրանց հետ կապված արժեքները ճանաչող :

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Գրականություն

1. («Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999)
2. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
3. Զեյնալյան Ն Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:
4. Ս. Ս. Պետրոսյան Հոգևոր արժեքների մնայուն դերը մարդու զարգացման գործընթացում
5. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
6. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

Հավելված

Առարկա՝	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	Կիսամյակ I	Դասարան V
Թեմա՝	Մեր հայրենիքը Հայաստանն է			
Օգտագործվող նյութեր՝	Առաջադրանքների քարտեր, հայրենասիրական վարքագծի օրինակների վերաբերյալ նյութերի ընտրություն, գրատախտակ, կավիճ, տետր			
Դասի նպատակը՝	Ծանոթացնել աշակերտներին հայրենասիրություն հասկացողության հետ Բացահայտել օրինակներով թեման Բերել աշակերտներին դեպի սերը հայրենիքի և բնության հանդեպ Շարունակել ձևավորել համընդհանուր կրթական գործունեություն :			
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կխաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Արտահայտել կարծիքը պատասխանելով հարցերին: Իմանալ և անվանել ՀՀ այն տարածքը, որտեղ գտնվում է իր դպրոցը:			

Գործողությունները(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը		

10բոպե–ընթացք **15**բոպե **12**բոպե	Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյար,, արժեքներ աշակերտները կատարում են առաջադրանքները Աշակերտները պատասխանում են հարցին: Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել	Ստուգվում է աշակերտների պատրաստվածությունը դասին: Մոտիվացիա (ինքնորոշում) ուսումնական գործունեության համար: Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Աշակերտներին տրվում են քարտեր՝ տերմինի սահմանում տալու առաջադրանքով Հանրապետություն -... Սահմանադրություն - ... Պաշտոնական լեզու - ... Հետևել կատարվող աշխատանքներին,	Ի՞նչ է Հայրենիքը: Ինչո՞ւ ենք մենք սիրում Հայրենիքը: Ի՞նչ է հայրենասիրությունը, Ո՞ւմ կարելի է հայրենասեր համարել:	Հարցադրում նեբի մեթոդ

3 բոպե-ավարտ	անհասկանալի հարցեր պատասխանում են հարցերին	Քարտերը լրացնելուց և հավաքելուց հետո տարվում է հարցեր աշակերտների ուշադրությունը ուղել մայրիկի հետ Հայրենիքի նմանության վրա և առաջարկվում է պատասխանել հարցերին: ամփոփում առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին. աշակերտներին տանել դեպի հայրենիքը սիրելու և նրա բարօրության համար աշխատելու	ինչու ենք մենք սիրում մայրիկին, Երբևէ վիրավորվե՞լ եք և բարկացե՞լ եք ձեր մոր վրա -Ինչպե՞ս բարելավել կյանքը մեր գյուղում: - Վերոնշյալներից ո՞րը կարող ենք ինքներս անել: -Մեր գործողությունները կարելի՞ է անվանել հայրենասիրություն: -Ապացուցիր քո տեսակետը	

		անհրաժեշտության համոզմունքին: Տնային աշխատանքի հաղորդում		
Տնային աշխատանք	1.Գրել ասացվածքներ Հայրենիքի մասին: 2.Պատասխանել հարցին «Ի՞նչ է հայրենասիրությունը»:			

Առարկա՝	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	Կիսամյակ I	Դասարան V
Թեմա՝	Հայրենասիրություն			
Օգտագործվող նյութեր՝	Առաջադրանքների քարտեր, հայրենասիրական վարքագծի օրինակների վերաբերյալ նյութերի ընտրություն, գրատախտակ, կավիճ, տետր			
Դասի նպատակը՝	Կրթել անհատականություն՝ հայրենասեր, որը կարող է պաշտպանել երկրի պետական շահերը: Բերել աշակերտներին դեպի սերը հայրենիքի և բնության հանդեպ Շարունակել ձևավորել համընդհանուր կրթական գործունեություն :			
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Երիտասարդ սերնդի բարոյական արժեքների ձևավորում: Հայրենիքի նկատմամբ հարգանքի բարձրացում: Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացում:			

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 15րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Աշակերտները բաժանվում են խմբերի, և դասի ընթացքում թղթի վրա գրում են իրենց առաջարկները, դասի վերջում յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի հայրենասիրության սահմանում	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Ստուգվում է աշակերտների պատրաստվածությունը դասին: Հետևել կատարվող աշխատանքներին, առաջարկվում է պատասխանել հարցերին:	Նիկոլայ Կոգանի այս խոսքերով սկսել զրույցը՝ «Ի՞նչ է նշանակում լինել հայրենասեր այսօր»: Իսկ դուք՝ այսօրվա դպրոցականներդ, ինչպե՞ս եք հասկանում, թե ինչ է հայրենասիրությունը: շահերի: Որոնք են Հայրենասիրության ակունքները,	Հարցադրումների մեթոդ

12բոպե 3բոպե-ավարտ	աշակերտները կատարում են առաջադրանքները Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի հայրենասիրության սահմանումը : կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր պատասխանում են հարցերին կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր	առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին. Ամփոփել մեջբերելով մեր մեծ Հայ Գարեգին Նժդեհի խոսքերը աշակերտներին տանել դեպի հայրենիքը սիրելու և նրա բարօրության համար աշխատելու անհրաժեշտության համոզմունքին Տնային աշխատանքի հաղորդում 1.Գրել հայտնիների խոսքեր Հայրենիքի մասին: 2.Պատասխանել հարցին «Ի՞նչ է նշանակում լինել հայրենասեր այսօր»:	հայրենասերն այսօր: Ի՞նչ է Հայրենիքը: Ինչո՞ւ ենք մենք սիրում Հայրենիքը: Ձեզանից յուրաքանչյուրը ինչպե՞ս է տեսնում Հայրենիքին մատուցած ձեր հայրենանվեր ծառայությունը: Պատրա՞ստ եք այսօր ցանկացած զոհաբերության և գործի հանուն ձեր հայրենիքի	